

ՏԵԱՌՆՆԴԱՌԱՋԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ
ՎԷՆ ՆԱՅՍԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Շաբաթ, Փետրուար 13ի երեկոյեան ՎԷՆ Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ Տեառնընդառաջի Նախատօնակ կատարուեցաւ հանդիսապետութեամբ Թեմս այցելող Գանատահայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բագրատ Եպիսկոպոս Գալստանեանի: Արարողութեան մասնակցեցան Ծուխին Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Շնորհք Աւագ Քինյ. Տէմիրճեան, Արժ. Տ. Արշակ Աւագ Քինյ. Խաչատուրեան, Արժ. Տ. Նարեկ Աւագ Քինյ. Մատարեան եւ Արժ. Տ. Զաւէն Աւագ Քինյ. Տէմիրճեան:

Բագրատ Սրբազան ժամերգութեան սկիզբը քարոզեց Բուն Բարեկենդանի՝ Մեծ Պահոց եւ Տեառնընդառաջի մասին, յայտնելով որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Տեառնընդառաջի Տօնը յայտարարած էր որպէս Նորապսակներու Տօն:

Ժամերգութեան աւարտին «Քրիստոս Փառաց» շարականի երգեցողութեամբ եւ վառած մոմեր ի ձեռին, հոգեւորականներն ու հաւատացեալները թափօրով առաջնորդուեցան եկեղեցւոյ բակը, ուր աւանդական խարոյկի շուրջ հաւաքուեցան՝ միշտ յիշելով, որ Քրիստոս ինքն է աշխարհի լոյսը եւ թէ այդ լոյսը պէտք է շողայ հաւատացեալներու հոգիներուն մէջ եւ յատկապէս Մեծ Պահքի ընթացքին աղօթքով եւ պահեցողութեամբ, որպէսզի ցնծութեամբ դիմաւորենք Սուրբ Յարութեան Մեծ Տօնը: